Հաշվետու՝ 2021թ.-ին, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, հավատարիմ մնալով սահմանված ռազմավարական նպատակների արդյունավետ իրագործման ավանդույթին, արձանագրեց մի շարք նվաճումներ և որոշ հիմնական ցուցանիշների աճ, շուկայում դիրքի ամրապնդում՝ շնորհիվ հաճախորդների վստահության, հավատարմության և Բանկի աշխատակիցների նվիրված ջանքերի, արդյունավետ ու ակտիվ թիմային աշխատանքի՝ ապահովելով բանկի շարունակական կայուն զարգացումը և գործունեության որակապես նոր՝ առավել արդիական փուլին անցումը:

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականը՝ ձևավորված շահույթը կազմել է 2,956.4 մլն դրամ:

2021թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 39.1 մլրդ դրամով կամ 12.2%-ով՝ կազմելով 359.9 մլրդ դրամ, ընդ որում՝ հաճախորդներին տրված վարկերը և փոխատվություններն աճել են 27.6 մլրդ դրամով կամ 14.3%-ով՝ կազմելով 220.9 մլրդ դրամ, ներդրումային արժեթղթերը նվազել են 1.4 մլրդ դրամով կամ 3.2%-ով՝ կազմելով 42.8 մլրդ դրամ:

Բանկի պարտավորությունները, որոնք ձևավորվել են ներքին և արտաքին շուկաներից ներգրավված ժամկետային միջոցների և ցպահանջ միջոցների հաշվին, հաշվետու տարում աճել են 13.4%-ով կազմելով՝ 316.6 մլրդ. դրամ: Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 23.5 մլրդ դրամով կամ 20.8%-ով՝ կազմելով 135.9 մլրդ դրամ: Բանկի կապիտալն աճել է մոտ 4.0%-ով՝ կազմելով ավելի քան 43.2 մլրդ դրամ՝ հիմնականում արտաքին աղբյուրի՝ կանոնադրական կապիտալի համալրման, և ներքին աղբյուրի՝ ձևավորված շահույթի հաշվին:

Հաշվետու տարում բանկը շարունակեց փոխշահավետ համագործակցությունը միջազգային ֆինանսավարկային կառույցների և արտերկրի խոշորագույն առևտրային բանկերի ու ֆինանսական կազմակերպությունների հետ՝ ընդլայնելով համագործակցության շրջանակները, գործող ծրագրերը, ինչպես նաև ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում: Այսպես. 2021թ. բանկը միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ կնքել է 24.0 մլն ԱՄՆ դոլարի, 5.0 մլն Եվրոյին համարժեք ՀՀ դրամով վարկային պայմանագրեր, որոնցով ներգրավված ռեսուրսներն ուղղվելու են միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը և զարգացմանը, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետ կանաչ ծրագրերի իրականացմանն ուղղված վարկավորմանը, ինչպես նաև 5.0 մլն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ ստորադաս փոխառության պայմանագիր:

Հաշվետու տարվա բանկի արդյունավետ տարածքային քաղաքականության մասին են վկայում նախորդ տարիներին գործարկված մասնաճյուղերի կայուն և դինամիկ զարգացումը, ինչպես նաև տարվա ընթացքում գործարկված մասնաճյուղերի գործունեությունը:

Բանկի զարգացման արձանագրված հաջողությունները մեծապես պայմանավորված են արդյունավետ կադրային քաղաքականությամբ, որը զուգակցում է կադրերի վերապատրաստումը գործուն խրախուսման համակարգի ներդրման հետ:

Բանկային համակարգում սուր մրցակցությունը նպաստում է համակարգի ընդհանուր առաջընթացին՝ պայմանավորված մրցակցությանը դիմանալու նպատակով բանկերի կողմից ձեռնարկվող միջոցառումներով: ՀՀ բանկային շուկայում դիրքերը պահպանելու և առաջընթաց զարգացում ապահովելու նպատակով՝ բանկը.

- մեծ ուշադրություն է դարձնում մատուցվող ծառայությունների ոչ միայն քանակական բազմազանմանը՝ նոր վարկային և ավանդային ծառայությունների մշակման և ներդրման առումով, այլ նաև որակի բարձրացմանը, հաճախորդների սպասարկման ոլորտում նորագույն արդիական թվային տեխնոլոգիաների կիրառմանը,
- իրականացնում է ակտիվ գովազդային քաղաքականություն բանկի կողմից մատուցվող նոր ծառայությունների և նոր սակագների մասին հասարակության լայն շերտերին իրազեկելու համար,
- արձագանքելով ներքին շուկայում տեղի ունեցող զարգացումներին՝ բանկը վարում է ճկուն սակագնային և տոկոսադրույքային քաղաքականություն:

Ռիսկերի բացահայտման և կառավարման գործուն համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումները մշտապես գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Բանկի ռիսկերի կառավարման գոյություն ունեցող համակարգը, որը ներառում է ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման» քաղաքականությունը՝ ըստ տարբեր ռիսկատեսակների կից կարգերով մշտապես զարգանում ու կատարելագործվում է, որը առաջիկայում նույնպես կզարգանա, կկատարելագործվի և կունենա նոր որակական մակարդակներ:

Խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Հայրապետյան

Խորհրդի անդամ Լ.Պետրոսյան

29.04.2022թ